

ԱՆՁՆԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ԵՒ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ
ՕՐԻՆԱՅ ԱՌԱՋ.

Երկայումս, ինչպէս յայտնի է, անձնասպանութիւնն ամենասովորական և համարեա առօրեայ յանցանքներից մէկն է համարվում։ Իւր յաճախ կրկնուելու շնորհիւ նա ըստ երեւութիւն կորցրել է արդէն իւր սարսափեցուցիչ բնաւորութիւնը և հասարակութեան վերայ չի թողնում այն ծանր տպաւորութիւնը, որ պէտք է ունենար իրօք որպէս մի ամենասարսափելի երեւոյթ։ Անձնասպանութեան պատճառները պարզելու և մեկնելու համար անթիւ և բազմատեսակ բացատրութիւններ եղան։ Մի քանիսը բացատրել են «կեանքի տաղտկութեամբ», իսկ կեանքի տաղտկութիւն ինքն ըստ ինքեան ոչ թէ գրելաւոր, այլ ածանցական մի փաստ է, վասնորոյ և չի կարող կատարեալ և բաւարարիչ բացատրութիւն համարուել։ Ոմանք ասում են, թէ դորա պատճառն այն է, որ ժամանակակից հասարակութեանց մէջ սաստիկ զարգացել է մտախոհութեան աստիճանը, բայց և այս բացատրութեամբ չի կարելի մեկնել երոշել ինքնասպանների բոլոր տեսակները, որովհետեւ այդ յանցանքը գործում են և մանուկներն ու ռամիկները, չը զարգացած մարդիկ ևս։ Այլք — բացատրել են նորան ներկայ ժամանակիս մէջ տիրապետող կրօնական համոզմանց թուլութեամբ։ Այս բացատրութիւնը միւսներից աւելի հաւանական է, թէ և սա էլ սահման է պահանջում, որովհետեւ անձնասպանութեան մի քանի դէպքեր կան, ուր ինքնասպանները դիմել են այդ բանին կրօնական զրդմամբ, եկեղեցի գնալ գալով, պահքով ու աղօթքով, խոստովանութեամբ ու հաղորդութեամբ։ Անձնասպանութեան ետևիւնը բացատրելու համար հարկաւոր է ուշադրութիւն դարձնել պատմութեան վերայ, որ մեզ մի քանի տեղեկութիւններ է տալիս այդ երեւոյթը բացատրելու համար։

Անձնասպանութեան պատմութիւնը որոշակի կերպով բաժանվում է երկու մաս.—) հեթանոսական և ք) քրիստոնէական։ Քրիստոնէական և հեթանոսական հասկացողութիւններն իրարից խիստ որոշող կետեր ուրիշ տեղ այնքան շատ չի կարելի ցոյց տալ, որքան այն հայեացքների մէջ, որ ունին քրիստոնէութիւնն ու հեթանոսութիւնը անձնասպանութեան վերայ։ Հեթանոսութեան ժամանակ անձնասպանութիւնը՝ սակաւիկ բացառութեամբ, յանցանք չէր համարվում, իսկ մի քանի դէպքերում նորան սխրագործութիւն էին համարում, այն ինչ՝ քրիստոնէութիւնը միանգամայն դատապարտեց նորան, որպէս մի սարսափելի և գարշելի յանցանք, որպէս մի ծանր մեղսագործութիւն։ Այդ զանազանութիւնն, ի հարկէ, կախումն ունէր այն հասկացողութիւնից, որ հեթանոսութիւնն ու քրիստոնէութիւնն ունէին կեանքի և մահուան վերայ։ Հնութեան հռչակաւոր խորհողներից մի քանիսը,

ինչպէս են Պիւթագորասն ու Պլատոնը, իրաւ է, թէ և չը կարողացան բմրոնել այն հայեացքը, որ ունի քրիստոնէութիւնը կեանքի վերայ, սակայն ունէին խելամոռութիւն հասկանալու, թէ ինչ է կեանքը և զրսրովումէին անձնասպանութիւնը՝ նորա ասումէին թէ՝ որովհետեւ աստուածութիւնն է մարդուս իշխան նշանակել երկրի վերայ, դորա համար էլ ոչ որ իրաւունք չունի իւր պաշտօնից ձեւընթափ լինել առանց իւր մեծ Տիրոջից արձակումն ստանալու, այս միտքն էր յայտնում Պլատոնը, Պրոտինէս և Պորփիրիոս նոյնպէս նախատինք էին կարդում անձնասպաններին, իսկ Վիրգիլիոս Դանտեսի նման ենթարկումէր նորանց սոսկալի պատժի, Բայց հնութեան այլ փիլիսոփական հայեացքների ներկայացուցիչներն այդ աչքով չէին նայում անձնասպանութեան վերայ, Զէնոնէս գովում ու քաջալիրումէր անձնասպաններին, Մարկոս Արէլիոս՝ հնութեան այդ բարձր բարոյական հեղինակը, տատանվումէր իւր մտքերի մէջ և չէր իմանում, թէ ինչ ասէ զրահանապէս ինքնասպանութեան վերայ, Ընդհանուր առմամբ նորա մտքերը համաձայն են պլատոնեան մտքերին, բայց նա բացառութիւններ էլ է ճանաչում և կարծումէ, թէ մարդ պէտքէ սպանութեան դիմէ, երբ տեսնի, որ դիմումէ բարոյական անկման, Աննկան հրճուանքով է պաշտպանում ինքնասպանութիւնը և ճարտարօրէն է նկարագրում նորան, որպէս միակ յուսալի պատասպարան երկրիս երեսին գտնուած բոլոր հալածեալների և տանջանքի մատնուածների համար, նաև Նիկեոն գովաբանումէ Վատոնի ինքնասպանութիւնը, որ առաքինութեան մեծ օրինակ էր համարվում զենոնեան (ստոյիկեան) փիլիսոփաների համար և ճառի սիրելի նիւթ — ներբողարանների համար, նորա օրինակը շատ հետեւողներ ունեցաւ, Անձնասպանութեան վերայ ունեցած այդ տեսակ հայեացքը զենոնեան փիլիսոփայութեան վերջին եզրակացութիւնն էր, որ մերժումէր երջանկութեան և անմահութեան յոյսը և ուսուցանում մարդկանց արհամարել մահուան ամեն մի ահ և երկիւղ, այս բանը մարգկային գոռողութեան բնական մակարերութիւնն էր, որ քարոզումէր զենոնեան փիլիսոփայութիւնը, մարդկացին այդ գոռողութիւնը ամեն բանից աւելի էր խորշում խոնարհելուց, և բարձրագոյն կամաց հրնազանդութիւն չէր ճանաչում, Սակայն ստոյիկեանութիւնը միակերպ և հաստատ չէր կանգնում ինքնասպանութեան համար իւր սահմանած օրէնքի վերայ, Գոնէ Նպիկուրոս նորա վերայ անտարբեր աչքով էր նայում, և նորա աշակերտներից զանազան ուղղութեան անձինք, ինչպէս՝ Լուկրեցիոս, Ատտիլիոս՝ Նիկեոնի բարեկամը, Վասսիան՝ բռնաւորի սպանողը և թեթեւամիտ Պետրոնիոս — որքա ամենքը օգուտ էին քաղում իրանց ուսուցչի վարմունքից, Պլինիոս բախտաւոր էր համարում մարդուն նորա համար, որ ձեռքին ունի մի այնպիսի միջոց, որպիսին է անձնասպանութիւնը, որ անմատչելի էր նաև անմահ աստուածներին, Ի հնումն օրէնքը բնականաբար հետեւումէր հաժարական կարծիքին

և չէր դրոշմում անձնասպանների վերայ անարգանաց ոչ մի կնիք, բացի բացառական դէպքերից, զոր օրինակ երբ քաղաքական յանցաւորները աշխատումէին անձնասպանութեամբ խոյս տալ և ազատուիլ դատապարտուելու անպատուութիւնից և կալուածների յարքունիս գրաւվելուց, Բայց անձնասպանութիւնը գովութեան և քաջալերութեան էր արժանանում, երբ մարդիկ դիմումէին նորան երկարատե հիւանդութեան տառապանքից ազատուելու կամ զառամեալների անկարութեանը վերջ դնելու համար: Սննհկան ու Եպիկուրոսը վերին աստիճանի փոքր հոգութիւն էին համարում այսպիսի դէպքերում օգուտ չը քաղել այնպիսի մի յարմար միջոցից, ինչպիսին է ինքնասպանութիւնը: Սիլիոս իտալացի հռովմէական բանաստեղծը համարվումէր այսպիսի կարծեցեալ քաջասիրտներից մէկը (նա իրան քաղցով սպանեց, որ ազատուի անրուժելի ցաւից): Պլենիաս կրտսերն առանձինն բաւականութեամբ ու հրճուանքով է յիշում մի մարդու անուն, որ անվեհերութեամբ ձեռն մխեց իւր անձին, իմանալով՝ որ իւր հիւանդութիւնն անրուժելի է: Նշանաւորն այն է, որ Յուլիանոս ուրացողը դատապարտումէր անձնասպանութիւնն, առաջին՝ հիմնուելով անպատեհական սկզբունքի վերայ, թէ պարտ է հնազանդիլ աստուածութեանը և երկրորդ՝ նորա համար՝ որ անձնասպանութիւնը նախատինք կը գցէր հոգու վերայ նոյն իսկ այն վայրկենում, երբ նա կը փոխուէր դէպի միւս կեանքը:

Քրիստոնէութեան՝ կեանքի վերայ ունեցած տեսութիւնն ու հայեացքը սաստիկ հակառակ են հեթանոսական հասկացողութեանց հետ և կրկնումենք, ոչ մի տեղ նոցա միջի վիհն այնքան ակնյանդիման և շօշափելի չէ, որքան անձնասպանութեան վերայ ունեցած գաղափարների ու տեսութեանց մէջ: Պղատոն թէև փաստերով ապացուցանումէր, թէ մարդիկ չըպէտք է դասալիք լինին յաստուածուստ սահմանած տեղից և Պլուտարքոս — դատումէր, թէ գովութեան արժանի է տառապանաց համբերիլը, քան թէ կեանքից խոյս տալը, սակայն այդ մտքերն աւելի պայծառ լուսով լուսաւորվեցան քրիստոնէութեան ժամանակ և ստացան անհամեմատ հաստատուն կրօնական — բարոյական հիմունք: Այստեղ թագաւորեց այն միտքը, թէ չը կայ մի այլ պատուիրանադնացութիւն, որ այնքան յայտնի կերպով հերքէր Աստուածային նախախնամութեան գոյութիւնը, որպիսին է անձնասպանութիւնը: Քրիստոնէութեան ազդեցութեան տակ ծնեց և զարգացաւ այն խոստովանութիւնը, թէ մարդիկ անձնապէս պատասխանատու են Աստուածային բարձրագոյն արդարադատութեան առաջ ամեն մի պատուիրանադնացութեան համար: Նոցա մէջ զարգացաւ կենաց սրբութեան խոստովանութիւնը, որովհետև կեանքը ճանաչուեցաւ աստուածային ամենաթանկագին պարգև, վասնորոյ անձնասպանութեան բնական երկիւղն առաւել սաստկացաւ և որպէս սպանութեան ամենասարսափելի տեսակ, որ միջոց և ժամանակ էլ չի տալիս զղջման և ապաշխարութեան, համարեցաւ

ծանր չարագործութիւն, Այն դժբախդութիւններն ու կեանքի դժուարակրութիւնները, որ առաջ յաճախ մղումէին մարդուն դէպ ինքնասպանութիւն, այժմ ստացան բաւարար և ճշմարիտ բացատրութիւն. նորա ճանաչուեցան որպէս արդար հատուցումն մեղաց և քրիստոնէական հաւատի հետ միացած՝ եղան փրկող և բարոյապէս սրբող ու լուսաւորող զօրութիւն, Անձնասպանութեան վերայ կարգացուած Սողոմոնական ջատագովութիւնը սուտ համարուեցաւ, որովհետեւ դա առաջ էր եկել այն թիւր հասկացողութիւնից, որ հնէն ունէին ճշմարիտ առաքինութեան վերայ, Եւ նախնի եկեղեցին այնքան հաստատ էր իւր կարծեաց մէջ, որ բարեպաշտական մարտիրոսութեան հետամտութիւնն իսկ դատապարտումէր նա որպէս անողջախոհութիւն և հերձուածողութիւն, Այսպէս նա դատապարտեց զօնատեաններին՝, որովհետեւ մարտիրոսական պսակին արժանանալու նոցա ցանկութիւնը հասել էր մոլեռանդութեան, մոլեկրօնութեան, Եւ այս տեսութիւնն այնպէս խոր արմատ էր գցել հաւատացեալների խելք ու մտքի մէջ, որ նախնի հաւատացեալների մէջ սովորաբար անձնասպանութեան հետք էլ չը կար, Անձնասպանութիւնը երեւան է գալիս, մանաւանդ թէ զօրեղանումէ յեղափոխական շարժմանց ժամանակ արեւմտեան երկրներում (Դար XVI), երբ սկսուեց ժառանգութիւն մնացած հաւատալիքների քայքայումը և երբ այդ շարժմանց հոսանքի մէջ ժողովուրդեան ստուար մասը մնաց բարոյական կողմից թողլ հիման վերայ, քանզի նա պառակտուելով հնից, չունեցաւ այնքան մտաւոր և բարոյական ոյժ, որ նորին յարի, կատարելապէս սեպհականացնէ իրան և նորա վերայ զնէ իւր մտաւոր ու բարոյական կեանքի հիմունքը, նկատելու արժանի կետն այն է, որ այս պատմական փաստը իւր նշանակութիւնը պահումէ մինչև ներկայ ժամանակը, Արձակագրական փաստերը փութաջան աշխատութեամբ հետազօտող ականաւոր Բօկլին ասումէ, թէ ինքնասպանութիւնն աւելի է տարածուած բողոքական երկրներում, քան կաթոլիկ, իսկ XVII և XVIII դարերում նա աւելի էր տարածուած Անգլիայում, քան Եւրոպիոյ ցամաքի վերայ, Եթէ դառնանք XVIII դարի հեղինակների գրուածքների և քննենք նոցա տեսութիւնն ու հայեացքները, որ ունեցել են անձնասպանութեան վերայ, կը նկատենք, որ նորա կարծես թէ դարձել են հեթանոսական հայեացքին, Ռուստոն դեռևս տատանվումէ անձնաւասպանութեան խնդրի մէջ. . . . , Առջեւն արդէն ներկի է համարում յայտնի պայմաններում ու դէպքերում, Սակայն նա ընդարձակ ժողովրդականութիւն ստացաւ հանրագէտների մէջ, որոնք ջերմեռանդ

(1) Դոնտտեան տղանդն սկիզբն առաւ Դոնտտեայից 311 թուականին Ալիքիէտէսա ուսուցանումէր, թէ մի անգամ եւ եթ մեղաւորող չը պէտքէ մասնակցութիւն ունենայ եկեղեցու հետ եւ ընդունուի նորա մէջ:

պաշտպան հանդիսացան նորան և հարկն ստիպած ժամանակ միակ միջոց էին համարում նորան նիւթական կեանքը բառնալու համար¹⁾։ Այս գաղափարի ազդեցութեան տակ անձնասպանութիւնը սաստիկ զարգացաւ, և գաղղիական յեղափոխութեան ժամանակ, երբ նկրտումէին ճշնշել քրիստոնէութիւնը և նորատեղ հաստատել փիլիսոփայական հիմնասութիւնը, ինքնասպանութիւնն ընդարձակ չափ ու սահման ստացաւ, որ կարելի է արժանաւոր ապացոյց համարել ժամանակի հիմնաստանական սկզբունքին։ Ներկայումս անձնասպանութիւնն, ինչպէս վերնասացինք, շատ հեռու է հազուագիւտ երևութիւններ ժառանգելուց և իցաւ սրտի պէտք է ասել, որ նա արագապէս առաջ է ընթանում քրիստոնեայ երկրներում և գլխաւորապէս ամենաբաղադրակիրն ու լուսաւոր ազգերի մէջ։ Մեր բժիշկները երբ կամենում են բացատրել, թէ ինչ է պատճառը, որ մարդիկ նշանաւոր և ծանր յանցանքներ ու անձնասպանութիւն են գործում, ընդհանրապէս կրկնում են, թէ դորա պատճառը մտաւոր խանգարումն ու սեւամաղձ հիւանդութիւնն է, բայց այդ կարելի է ընդունել որպէս մասնաւոր բացատրութիւն միայն։ Սոսկալի աղքատութիւնը, խուճապումն ու անհանգիստ ձգտումը դէպի նորագոյն կեանք, երբ ամեն բան շարժվում է շոգու և քամու արագութեամբ և երբ ամեն բան հողմային է ինչպէս քամին ինքը, շահամոլութիւնը իւր բոլոր անհանգստութիւններով, զժուարակիր և յանդուգն ձեռնարկութիւններով ու անյաճողութիւններով — շատ անգամ բնականաբար պնդիսի հետեւանքներ են ունեցել, որ թոյլ բնաւորութիւնները չեն կարողացել տոկալ վերջին տագնապին — այս ամենը շատ և շատ բաներ բացատրելով հանգերձ՝ լրիւ չեն կարողացել մեկնել անձնասպանութեան էութիւնը, վասն զի այս ամենը երկրորդական պատճառներ են, որոնց առաջնակարգ պատճառները պէտք է որոնել։ Իսկ ինչի՞ մէջ են կայանում այս գլխաւոր շարժիչ պատճառները, որոնք գաղտնի ներգործելով, ժամանակակից կեանքում տխուր պատկերներ են ծնում բարոյականութեան կողմից։ Անձնասպանութեան պատմութեան միջից յառաջ բերած տեսութիւնից պարզ երևում է, որ ինքնասպանութեան վերայ ազդեցութիւն ունին հետեւեւեմը — հետեւեւեմը և իմանոս ժամանակներում Աստուածութեան վերայ ունեցած միջին հասկացողութեամբ, կեանքի մեծ խորհուրդի վերայ կաղմած խաւար գիտակցութեամբ, իրերի վերայ ունեցած առաւել կամ սակաւ նիւթական, բնազննական տեսութեամբ մարդու անձնական կեանքը բարձր գին չունէր։ Ընդհատուելով, նա նորից մտնում էր բնութեան համաշունչ կեանքի մէջ,

(1) Նամրագէտները (էնցիկլոպեդիստներ) ասորումէին Յրոնտիական տառջին յեղափոխութեան ժամանակ, որովք մերժումէին թէ կրօնը եւ թէ եղած օրէնքները, այս թիւր վարդապետութեան հիմնադրուներն էին — Ղիդրոն, Գալաթներ ու Նալբախը։

կամ մինչև անգամ մահուան վճռով փոխվում էր որևէ արարածի, երբեմն ստորին, երբեմն մարդուց էլ բարձր արարածի մէջ (հոգեփոխութիւն)։ Դորա համար անհաւան փիլիսոփայի (սկեպտիկ) թունով չը վարակուած հեթանոսի աչքում մահը մեծ երկիւղ չէր պատճառում, ուստի և կրօնական նպատակով կատարուած անձնասպանութիւնը մի սովորական գործ էր։ Բայց միւս կողմից երբ ուտիճ՝ սկեպտիկանութիւնը խախտեց այս պարզամիտ հասկացողութիւնները՝ առաջարկելով անողոք և ընդ նմին հեթանոսական իմաստութեան համար անվճռելի հարցեր — թէ ի՞նչ է կեանքը և ի՞նչ մահը, և երբ չը մշակուեց ոչ մի հաստատ, հիմնաւոր և զրական ուսումն խախտուած հնի փոխանակ, այն ժամանակ արդէն անձնասպանութիւնը երեւան ելաւ իր բարգասիք կեանքի անհաստատ մտաւոր — բարոյական դրութեան։ Ահա ձեզ յուսահատական դրութիւն։ Ստոյիկեան (Ձենոնեան) վարդապետութիւնը, որքան էլ որ արտաքուստ հաստատ, երկաթեայ ամրութիւն ունեցող սկզբունքի տէր է երևում, սակայն իսկապէս փիլիսոփայական մի յուսահատ դրութիւն է նա։ Այդ պատճառով էլ անձնասպանութիւնը սովորական բան է Ստոյիկեանների համար։ Այդ էր պատճառը, որ գլխաւորապէս ստոյիկեան փիլիսոփայութիւնն ընդունող Հռովմը անձնասպանների դասական երկիր էր դարձել, Հռովմայեցիք — այս մըշտընջնական զինուորներն անընդհատ պատերազմների ու արշաւանքների մէջ սովորեցան արհամարհել մահը, բայց մի և նոյն ժամանակ նոցա աչքից ընկաւ կեանքի գնահատութիւնը։ Ահա թէ ինչո՞ւ սուսերամարտիկների խողխողումը նոցա համար սովորական և զուարճալի խաղեր էին։ Ահաւասիկ անհաւան Ստոյիկեանութեան արգասիքը, որ հաստատուն նեցուկ չունի կրօնական համոզմանց մէջ։ Քրիստոնէութիւնն էր, որ հաստատեց այս նեցուկը ընդդէմ անմխիթար կասկածանաց։ Եւ մենք տեսանք, որ անձնասպանութիւն չէր լինում, քանի որ քրիստոնէական հաւատալիքները այն աստիճան ներգործող և կենսական էին, որ տալիս էին մտքին ու կեանքին հաստատուն նեցուկ։ Բայց նա նորից լոյս աշխարհ եկաւ, երբ ծագեց պապականութեան դէմ բողոքող յեղափոխութիւնը և տատանեց քրիստոնէութեան էական հիմունքը, նորա փոխանակ ոչ մի հաստատ բան չը տալով։

Անձնասպանութեան թիւը, ինչպէս տեսանք, աւելացաւ XV^{III} դարում, երբ տիրապետող վարդապետութիւնը հանրագիտութիւնն էր, բայց թէ հանրագիտութիւնը և թէ XV^{III} դարու ամբողջ փիլիսոփայութիւնը ոչ այլ ինչ էին, եթէ ոչ հեթանոսութեան վերածնելութիւն և մի և նոյն ժամանակ նորա անմխիթար տեսակը — հեթանոսութիւն աղաւաղուած սկեպտիկականութեամբ։ Իսկ որո՞նք են այժմեան անձնասպանութեան պատճառները — Արդէն ամեն ոք շատ թէ քիչ խոստովանում է, որ մեր XIX դարը կրթական յառաջդիմութեան մէջ ունեցած շուրջ ու փայլով հանդերձ հաստատուն և անյողգող համոզմանց

դար չէի Մեր դարը համարվումէ անդադար փոփոխուող և միմեանց հերքող ուսումնական տեսութեանց, հայեցուածքի և վարկածների (հիպոտեզա) կրկէս: Նորից սկսվումէ անհաստատ դրութիւնը, որ բազմիցս կրկնուելէ պատմութեան մէջ և ամեն անգամ յայտնի է եղել անձնասպանութեան տխրադէմ երևութով, որպէս անխուսափելի արգասիք այդպիսի անհաստատ և շարժուն դրութեան: Այդ դրութիւնը կարելի է սկեպտիկական տարբերութիւն անուանել: Այդ՝ հոգու այն դրութիւնն է, ուր մարդս ամեն բանի մէջ հաւատը կորցնելով, ընկնումէ անտարբերութեան մէջ թէ կրօնի և թէ կեանքի վերաբերութեամբ: Կեանքի մէջ բարոյական հաստատուն յենարան չունենալու պատճառով, հետ գհետէ թուլանում, ամեն մի խոչընդոտի առաջ դուրս և ձախող տպաւորութեանց տակ ոգեթափ է լինում: Հաստատուն համոզմունք չունենալով և մոռանալով կեանքի նպատակը, մարդըն այլևս չի կարողանում ոգևորուիլ ոչ մի բարձր գաղափարով, ոչ մի ազնիւ գործով, — սյնուհետեւ նորա իդէալն է դառնում մանր անձնասիրութիւնը, նեղ եսականութիւնը, որ այսօրուանից հեռուն չի տեսնիլ: Ասան որոյ երբ կը յաջորդէ վաղորդայն օրը և անակնունկի կերպով կը վիրաւորէ մարդու նեղ անձնասիրութիւնը, նա չի կարողանայ դիմանալ հարուածին և չը հասկանալով ոչ կեանքի գինը և ոչ նորա խորհուրդը, չունենալով հաստատուն հայեացք ու տեսութիւն խորհրդաւոր ապագայի վերայ և չը գտնելով նեցուկ տխուր ներկայում, առանց պատերազմի, առանց ծիգն թափելու, բուժ և խուլ յուսահատութեան մէջ կտրուակէ իւր առանց այն էլ կիսաբեկ կեանքի թելը:

Այս մարդիկը, որոնց տեսնելը ներկայումս սովորական է դարձել, մի նշանաբան ունին, որի ձայնը շատ աղետալի ու ցաւալի կերպով է հնչում մարդուս ականջին, սոքա անդադար կրկնուածն —

Է՞ր ձօնեցար դու ինձ, կեանք,

Զիրք անխորհուրդ և դատարկ:

Սակայն հարկաւոր է ուշք դարձնել, թէ այդ աղէտալի հարցին ո՞րպիսի զօրեղ և ուրախ ձայնով է պատասխանում ճշմարիտ քրիստոնէական հաւատքով ու համոզմունքով լցուած բարբառը:

Գեղեցի՜կ կեանք, դու ձիրք անգին,

Ասան կենաց ընծայեցար իմ անձին:

Այդպիսով և սկեպտիկականութիւնը, որպէս արտայայտութիւն խելազուրկ և անհիմն համոզմանց, թուլացնելով մարդու կրօնական հաւատը, զցելով նորան երկմտութեան մէջ և ապականելով անապական և կորովի հոգին, մասնումէ նորան յուսահատութեան և դորա հետեւանք անձնասպանութեան ճերաններին: Արդիս այդ ախտով վարակուած են ամեն հասակի և մտաւոր զարգացման ամեն աստիճանի պատկանող մարդիկ: Դորանից է որ անձնասպանութեան են դիմում — հարցաքննութեան ժամանակ անյաջողութեան հանդիպած աշակերտն էլ, անհեռա-

տես յանդգնութեամբ իւր կարողութիւնը կորցրած վաճառականն էլ, ուսումնականն էլ և այլն: Դոքա բոլորն էլ յուսարեկ մարդիկ են, դոքա ամենքն էլ վարակուած են մի ակտով, դոքա ամենքի հոգին էլ թուլացած է:

Այս հասարակական սարսափելի և կորստաբեր ակտի դէմ կայ մի ճար, այն է՝ խելացի դաստիարակութիւն հիմնուած կրօնական—բարոյական սկզբունքի վերայ: Նա միայն կարող է և ընդունակ վերակրթել հասարակութիւնը և անհոգի սկեպտիկներինց դարձնել զօրեղ հոգու տէր մարդիկ:

(Թարգմ.)

Մէսրոֆ Գալանայ, Գլխավոր

Ազգայնագիր:

ՇԵՐՇԵՐՈՐԾԻ ԳԵՐՈՐԾԵ:



արունը եկաւ դաշտեր կանաչեց,
Ժիր երկրագործիս՝ նոր աշխոյժ տուեց,
Գնամ դուրս հանեմ ժանկոտ խոփ, գութան՝
Ընդառաջ վազեմ ես սիրուն գարնան:

Ամբողջ ձմեռը նստած օդայում՝
Անհամբեր նորան էի սպասում,
Թէ ե՞րբ իմ գարուն կտայ աւետիս: —
Վեր կաց՝ ձայն տալով քաջ երկրագործիս:

Մըլ ու ջէյըն իմ սև գոմէշներ՝
Նոյնպէս ոսկեգոյն իմ ջուխտակ եզներ,
Դուրս հանեմ գոմից կանաչ դաշտ վազեն
Որ ցատկոտելով՝ խաղան, արածեն:

Առանց վար վաստակ տան մէջ նստած եմ,
Ո՛չ ուսում ունիմ, ո՛չ արհեստ գիտեմ.
Իմ արհեստ ուսում՝ իմ եզ, իմ գութան,
Որ երկրագործիս՝ սիրտ և ոյժ կտան: